

Մ Ի Հ Բ Լ Հ Ա Յ Ո Յ Մ Է Հ

(Ծարտահակոթիւն:)

Բ.

ՄԵՅՐ ԵՆՈՒՅՆ ԿՈՐ ԿԱՐԳԻ ՓՈՓՈԽԵԿՆԵՐ

1.

Մեհք անուան մեր յիշած 15 խումբ ձեւ-
մբին ունին մի ընդհանուր կողմ, այն է՝ որ
սրանք բոլորն էլ սկսվում են և հնչինով:
Սակայն բացի այս կարգի խմբերից՝ Մեհք
անունն ունի ուրիշ կարգի փոփոխակներ էլ:
Մրանց ստուգաբանութիւնն ակներեւ դարձ-
նելու նպատակով պէտք է նախապէս մի
քայլ ընկրկենք՝ վերադառնալով մեզ ծանօթ
Մեր խմբին, որին պատկանում են Մեր-ու-
ժան, Մեր-Շապուչ ու Մեր-Սերուխտ ա-
նունները:

1895ին Ֆերդինանդ Յուստին է, որ Մերը
համեմատեց Միհրին¹: Նա այս հաստատեց
ոչ միայն հայոց, այլ եւ պարսից մէջ դոր-
ծածական անուններով: Երա սաելով, օրի-
նակ, պարսկական Մերան, Մերեպատէս,
Մերենէս ու Մերիբանէս անունները նոյն
էն, ինչ որ Միհրան, Միհրապատէս (Մի-
հրատ), Միհրանա (Միհրան) ու Միհրա-
պան (Միհրաւան, Մեհեւան) անունները
(անդ, 203 եւ յառաջ):

Մեր-ուժան, Մեր-Շապուչ ու Մեր-Սե-
րուխտ անուններից Հիւրշմանին անձանօթ
է Մեր-Սերուխտաւ, նա դիտէ միայն Մեհք-
Սերուխտ (Արմ. Gr. 54). Բայց Մերուժան
վարիանտին ծանօթ է, եւ նա էլ է այս հո-
գարանի ծանօթ է, եւ նա էլ է այս հո-
գարանի մեհքուժան-Մեհքուժան անուան
փոփոխակ (անդ, էջ 53 ու 507): Գալով Մեր-
Շապուչ ձեւին՝ պէտք է սաել, որ հոչակա-
ռը լեզուազէտն այս գէտքում մոռանում է,
որ Մեր = Միհր, ինչպէս այս նրան յայտնի
էր Մեհքուժան անուան սոուղաբանութիւ-
նից, եւ չի գոտահում Մեր-Շապուչ փոփո-
խակնեն, որ թ. Արծրունին պահած ունի
երեք սեղ, ուստի ընկրկում է եւ տարակու-
ութիւն հարցում, թէ արդեօք այս Մեհքու-
չանը չպէտք է կարգալ ներշապուչ (անդ,
53—54):

Լեզուաբանական մէծ հմտութիւնը
Հիւրշմանի այս կէտում չէ փրկել այն ան-

հիմն տարակոյակից, որ նրա մէջ ծագել է
պատմական-բանասիրական որոշ տուեալնե-
րին բաւականաչափ ծանօթ ըմբնելուց: Վեր-
ջիններիս մօտկանց ուշք դարձնելով՝ նա
կարող էր տեսնել, որ թովմա Արծրունու Բ,
թ, 81ում յիշած Մեր-Շապուչը նոյն Ար-
ծրունու Բ, թ, 84ում ասած Մեր-Շապուչն
է, իսկ այս էլ ոչ այլ է, բայց եթէ Ղաղար
Փալպեցու (Բ. լթ., 71) յիշատակած Միհք-
Շապուչ Արծրունի մարդաբետը, որը 451
թուականին վարդան Մամիկոնեանի զինա-
կիցն էր:

Թէեւ այս առագիսութիւնն ու Յուստու
մատնանշած զուգազրութիւններն արդէն
հիրքում են Հիւրշմանի այն կասկածը, թէ
Մեր-Շապուչ ձեւը սիալ ընթերցուած է
կամ վրիսակ, սակայն աւելորդ չի լինել
մատնանշել մի քանի նորանոր փաստեր էլ,
որոնք վերջնականապէս հաստատում են,
թէ Մեր-Շապուչը Միհք-Շապուչ անուան
տարածուած ձեւերից մէկն է:

Այս նորանոր փաստերը դանում ենք
Հիւրշմանի Հայերէնի քերականութիւնից
(1897 թ.) չորս տարի յետոյ (1901 թ.) հրա-
տարակուած «Գիրք թղթոց» ժողովածուի
մէջ: Այստեղ երկու տարբեր վաւերազրե-
մէջ: Այստեղ երկու տարբեր վաւերազրե-
մէջ: Պարբ սկզբին Բարդէն կաթուղիկո-
սին ժամանակակից մի եպիսկոպոս երկու
անզամ յիշուած է Մեր-Շապուչ անունով
(41, 48): Այսուհետեւ նոյն մատեանի մէջ
վեց զանազան վաւերազրերում ներսէս Բ.
կաթուղիկոսին ժամանակակից մի եպիսկո-
պոս եօթ անզամ յիշուած է դարձեալ Մեր-
Շապուչ անունով (52, 55, 62, 70, 772, 73
ու 76): Գերջապէս կայ մի երրորդ անձ, որ
չէ ժամանանչուած մինչեւ այժմ: սա «Ուխո-
միաբանութեան Հայոց աշխարհիս» վաւե-
րազրում թուարկուած իշխաններից մէկն է,
որ էլի կոչվում է Մեր-Շապուչ¹: Այսպի-
սով Մեր-Շապուչ ձեւը «Գիրք թղթոց»ում
ինը վաւերազրերի մէջ դործ է ածուած
տան անզամ:

Այս բոլոր տուեալները հարկադրում
են, Հիւրշմանի տարակոյակի հակառակ ըն-
դունելու որ Մեր-Շապուչ տարբերակը սիալ

¹ Արեգը թղթոցը, 74, «Գրիգոր ի Հայեկան, Առ-
հակի մարդանան...» Մեր-Շապուչ ի Ծիսական, Հա-
մազաստ Ձեւականան...» Մեր Հաւանական ինք Հա-
մազաստ ազնուականի մի Ծիսական, Հայրանունը կամ
ազգանունը: Թերեւս ուղեկից «Մեր-Շապուչ» ի Զիւնա-
կան, Համազաստ Զիւնականսան:

¹ Justi, 208. Mithra բառի ծանօթութեան մէջ՝ առաջ դարձաւ, առաջ անուան տակ: Հմայն, Տաշեան, «Ուսումնաց անուանների», 676:

Ընթերցուած չէ եւ ոչ էլ վրիպակ, այլ
Միհր-Շապուհ անուան մի փոփոխակ, որ
բաւական տարածուած է եղել իւր ժամա-
նակին:

Մեր խմբին պատկանող անունների մի-
ջից յասուկ կարեւորութիւն է ստանում
Մեր-Շապուհ ($=$ Միհր-Շապուհ) անունը,
որովհետեւ սրա ուսումնասիրութիւնը երե-
ւան է բերում Մեր ($=$ Միհր) անուան բո-
լորովին նոր կարգի ու անյայտ մի փոփո-
խակ :

$\Omega^{\circ} \mu_n \not\subset w_n$:

Եթէ չենք սխալվում, չայ բանասէլնե-
րից առաջին անգամ Նիկ. Աղոնցն է իւր
«Հայոստանը Յուստինիանոսի դարաշրջա-
նում» գրքի մէջ մատնանշել մի ուշադրաւ
իրողութիւն, թէ Ղազար Փարպեցու յիշած
Միհր-Շապուհ Արծրունի մարդպետը հենց
իւր՝ Փարպեցու յիշած Ներ-Շապուհ Արծրու-
նի է կամ Եղիշէ պատմագրի ասած Ներ-Շա-
պուհ Ռմբուեան Արծրունին¹: Աղոնցի կար-
ծիքով Ներշապուհ Միհր-Շապու-
հի գոեհիկ ձեւն է, Էջ 320: Աւելացնենք, որ
Ներ-Շապուհ ձեւը գործածական է դեռ եւս
Ե. դարում:

Այս Միջր-Շապուհ Արծրունի մարդ-
ութիւնն, որը Մ. Արծրունու «Պատմու-
թեան» մէջ անուանվում է Մեր-Շապուհ,
Փարսկեցին Հինգ անդամ, Եղիշէն Երեք ան-
դամ ու Կաղանկառուացին մէկ անդամ կո-
չում են Ներ-Շապուհ։

Կայ մի ուրիշ օրինակ է :

Ներսէս Բ. Կաթողիկոսին ժամանակակիցը ու Զ. զարի կէսերին ապրող Մամիկոնէց ու Տարօնոյ եպիսկոպոսը, որ «Գիրք թղթոց»ի մէջ եօթ անդամ յիշուած է Մերծապուհ անունով, Կանոնիքրեպում չ. բ. Տ.

1 Φωραψεκη, β., 17, 71 πτ. β., 17, 45, β., 17, 47
β., 17, 75, β., 17, 78, β., 17, 86, αγλ. τε ληγεξη “απωτ-
μιαθμιν θωρακινωνησην”, ζρωτη, φ. θωλωτησην, θηθ-
φη 1912, έχ. 51, 90, 147:

2 Կաղանկատուացի, Բ., թ. 127: Պ. Ամելզանը տարբերում է Միհր-Շապուհ մարդպետին Ներ-Շապուհ Արծրունուց (Այրարատու, Վենետիկ 1890, էջ 420): «սյն կերպ սիալուելով՝ Ղալար Փարպեցու Պատմութիւններու խմբագրողու ըստ ընծայող Գ. Տէր. Մկրտչեանն ու Սու Մալխասեանն Փարպեցու յիշեալ հատուածը կետադրում են այսպէս: «Միհրացի գնդին կարդէր (Վարդան) գլխաւոր զալէրն Արքունեաց, եւ զմարդպետն Միհր-Շապուհու (Փարպեցի, Բ., լիժ, 71): Ստորակեւու, որ մարդպետին ու Արծրունուն երկու տարբեր մարդ է դարձնում, աւելորդ է: Արծրունեաց տէրը հենց ինքը Միհր-Շապուհ մարդպետն էր:

պէս կը չլում է Ներ-Շապուհ¹: Նոյն այլ
անձն Ասողին էլ յայտնի է զարձեալ Ներ-
Շապուհ անունով (Բ, բ, 83):

Այն իրողութիւնը, որ Միհր-Շապուհ
մարդունեաին ու Ներ-Շապուհ Արծրունին
նոյն անձն են եւ որ ուրեմն Միհր-Շապուհ
= Ներ-Շապուհ, — օտարների մէջ քայլ
յայտնի է Յուստում, որն այս մասին խօսում
է Mihr-sabor ու Neršapuh անունների տակ՝
այսպիսով Աղոնցին կանխելով 13 տարի
(206 ու 208):

Զուայած Յուստուն այս արժէքաւոր
նուաճմանը՝ Հիւրշմանն այս կէտումն է է
առաջնորդուելով միայն լկուաբանական
կողմով ու անտեսելով պատմական բանա-
սիրական տեղեկութիւնների համապատաս-
խանութեան խնդիրը՝ Մեր-Շապուհ անունը
Ներ-Շապուհ կարդալ տալուց յետոյ այժմ
էլ մի նոր ենթագրութիւնից կառչելով՝
հարցնում է, թէ արդեօք Ներ-Շապուհն էլ
Ներսէ-Շապուհից չի առաջացել (անդ՝
54, 46, 57):

Այս ինչ այս մասին խօսք չի կարող լինել: Մեր յիշած դէպքերում Ներ-Շապուհ անունն անկախ հանդէս չի գալիս, որ կատածների տեղ մնայ: Փարպեցին, Եղիշէն ու Կաղանկատուացին Ներ-Շապուհ են անուանում նոյն այն իշխանին, որ յայտնի է Միհր-Շապուհ ու Մեր-Շապուհ պնուազվագործը Կանոնդրքերն ու Ասողիկն էլ Ներ-Շապուհ են ասում նոյն այն եպիսկոպոսին, որ «Գիրք թղթոցի» գանազան վաւերագրեր կոչում ին Մեր-Շապուհ: Այսպիսազ, եթէ կարելի է այսպէս ասել, Միհր-Շապուհ կամ Մեր-Շապուհ անունները երկրաչափորէն ծածկում են Ներ-Շապուհ անունը, և ուրիշութանք իրանք լիովին հաւասար են իրար:

Մեր-Շապուհ = Ներ-Շապուհ զուգուց
դրութիւնը լեզուաբանական տեսակէտից
առարկելի չէ: Մ չնչիւնի՝ նի փոխուելն (ու
ընդ հակառակը) յայտնի իրողութիւն է:

Գիտենք, որ Սասուն - Սասնայ տակու
տեղ ժողովուրդն ասում է Սասուն-Սաս-
նայ: Վիմական արձանագրութիւնների մէջ
Կատրամիդէ ու Թամիթա անունները պահպա-
ած են նաև Կատրանիդէ ու Թանիթա ձեւե-
րով²: Վաղուց ծահօթ են Նծրին ≡ Թօթին:

¹ "Կանոնի բրեց", 107, Տաշեսն, "Յուղակ Ֆեռար",
գրացն, 270, 372, 651, 705.

^a **Ալմական**, 13, աբք. 1010թ./թ. ու 157,

Նիբրկերաւ = Մուֆարզին զուգագրութիւնը: Մամբուռան տեղանունը, որ լիշտում է Ասողիկը (Գ. խզ., 278) դարձել է նամբուռան, ապա եւ նարիման¹: Հայաստանում մալականների Նեկիտին զիւղին հայ վիճականներն ասում են Մեկիտինօ: Մազատ անունով քամին կոչուել է նաև Նազատ², Ղազարսո Աղայեանը վկայում է, որ Մետրապոլիտ բառը ոմանք գրում էին Նետրապոլիտ³: Սեվրիչիսարցիք կրծկալին ասում են Վեսկեպ կամ Յեղկեպ⁴: Վերջապէս յիշենք, որ թիֆլիսցիք մորչ (= մորճ) բարի տեղ գործ են մծում հորչի, որ նշանակում է դալար, կանաչ⁵:

Այս բոլոր ասածներից հետեւում է և
Միջը-Շաղուհ = Մեր-Շաղուհ = Ներ-
Շաղուհ թեզիսն անքականի է թէ պատմա-
կան — բանասիրական ու թէ լիզուարանա-
կան տեսակէտներով քննելիս։ Ներ-Շաղուհ
= Մեր-Շաղուհ = Միջը-Շաղուհ զուգա-
դուութիւնից բղխում է մի նոր ու շատ կա-
ռեւոր զուգագրութիւն, այն է՝ որ Ներ =
Մեր = Միկրու։ Անուան զարգացման լին-
չութայի օղակներն են՝ Մեթրա — Միջը —
— Մերհ = Մեր — Ներ։

Մինչդեռ Միհր անուան ձեւերի սարկությունը 15 խմբերը միասին կազմում էին մի կարգ, որ սկսվում էր և հնչիւնով, այս ներքուժութեակը կազմում է մի նոր ու առաջժեմուր կարգ, որ սկսվում է և հնչիւնով։ Մեր մատենապետինը, լացի Երբ-Շապուհ անունից, ուրիշ նմուշ է տուել տակաւին Սակայն թվում է, թէ ժողովրդական բանահանութիւնը գեռ պահել է մի անուն որբակ կարելի է նշմարել Միհր-Մհեր անունով։

Պատմութեան պատմութեան 0-

«Բաս ժողովրդական աւանդութեան
զուգները սիրում էին այս դոյլ ծերպերը և
այդականից էին երկնքի ստովերը տեղաշա-

¹ Hübschmann, "Die altarmenischen
Strassburg 1900. L. 261.

Ամերիկա, Հայոց համայնք, ԵՊ, ԱՄՆ
Վանական պատճեն, Թիֆլիս 1899

5-6, *t₂* 82-83:

⁴ Հայ. Աճառիկան, «Հայոց գույքի մասին», Թիֆլիս 1913, էջ 765 եւ 810:
⁵ Աճառիկան, «Հայոց գույքի մասին», 794 ու 815:

5 Աճառեան, «Հայ. գաւառ».

նում : Այսինքն բարձրաւանդակը գտնվում է Երեւանի ու Շարուր-Դարձլազեպի գտառների սահմանում : Այստեղ, Այսինքն բարձրաւանդակի վրայ, Այսինքն գետի վտակներից մէկի մօտ մնացել է Նախար-Խանայարը, ուր ըստ աւանդութեան ապրել է Այսինքնի ամբողջ տափաստանին, Ենթիվ լեռնաշղթային ու Հորսի անտառին տիրապետող Օղուզը¹ :

«Խան» նշանակում է տեղ, վայր
(հմտ. դիւան-խանա, զառար-խանա,
քար-խանա): Աւրեմն նահար-խանա նշա-
նակում է Նահարի տեղ: Այս մի քայլայր
էր, որտեղ ապրում էր այն բարձունքներում
իր ծխող Օղուզը, Հական կամ զիւցազնը, որի
հանճն է Հաւանօրէն Նահարը:

Ո՞վ կարող է մինել այս Նահար Օղուզը :
Սրբ պատասխանը կարելի է տալ՝ յի-
շելով Մահեւան անուան ստուգաբանութեան
ժամանակ ասածներս : Մենք տեսանք, որ
Մահ ձեւը կարող է ծագած մինել Միհր ա-
նուան մի ալ, վերականգնուող տարրերա-
կից, որ է Մահը : Այս անունը լիաձայու-
թեան ենթարկուելով կուտայ Մահար, որից
նախանձնչինի փոփոխմամբ կը ստացուի Նա-
հար : Այս ստուգաբանութեան համաձայն
Նահար-խանա քարայրում ապրած ու այն
բարձունքնելում իշխող Օղուզը Միհր —
Մհեր — Մհեր Մահարն է, որ թագիուած
է Վանում Մհերի դուռ կոչուող քարաժայ-
ոփ և տեւին՝ արեւմուտքից ունենալով Ակո-
մի քարը կամ Աղուառու քարն, իսկ արեւել-
քից Զրմփ-զըմփ Մաղար (ակզրնապէս Մա-
հարայ) քարայրը² :

Հանդէս, թ. 6, Թիֆլիս 1917.

2.

Միհր անուան հայկական ու պարսկական փոփոխակների մէջ ընդհանուր համեռաշխաթին կայ: Ընդհանրապէս կարելի է հայկական տարբերակները նշարել պարսկականներում ու ընդհակառակը: Աշագրաւ ու գլխաւոր փոփոխակները, որոնք բացառութիւն են կազմում՝ միայն պարսկերէնում գտնուելով, Միլադ, Մաղդատ ու Մախարքս անուններն են: Յուստու կարծիքով Միլադ = Միհրդատ (206, 209, 213) դարդացման օղակները կը լինեն՝ Միհրդատ — Միհրդատ — Միրադ — Միլադ: Նոյն պարսկագէտի ասելով Մաղդատն էլ կարող է Միհրդատը լինել (188), այս դէպքում դարդացման օղակներ պէտք է ընդունել Միհրդատ — Մահրդատ — Մարդատ — Մաղդատ — Մահրդատ — Մաշրդատ — Մաշրդատ — Մաշրդատ — Մաշրդատ — Մաշրդատ: Մեր ենթադրած Մախարը փոփոխակն արդարանում է Առշարջ անուամբ, որ պահէլ են հին պատմիչները. Մախար-էսը կամ Մախարը Պահանուի արքայ Միհրդատ Մէծի որդին էր (188): Մեր կարծիքով այս Մախար անունը մեր ենթադրած Մահար անունն է, Միհր անուան փոփոխակներից մէկը: Այսպիսով պարսկերէնը տալիս է Միհր անուան երեք նոր փոփոխակ — Մախար, Միլ ու Մադ (Զըմփը Մադը Մադարա :

Միհրի անունով, ինչպէս որ նրանից ոչ հեռու ընկած նշանաւոր քարածայուը կոչվում է Միհրի դուռ, իսկ մօսիկ Ակրիու քարի մասին պատմվում է, թէ այնտեղ է փակուած էլի Միհրը: Աշագրաւ է, որ Պատրև-ի յիշեալ գրքի համաձայն՝ Կահար-ի խանայի մօսիկ գաւառում — Հին Կահարի հանուանում կայ մի ձմեռանոց (Քաթար) Մագարակայք անունով ու մի գետակ, որ կոչվում է Մագարա-չայ (Պատրև, 163): Լ. Միհրիթ-բէկն արդէն մատնանշել է մի տեղանուն Վրաստանում: Մահերէ այս կապելով Միհր-Միհր անուան հետ (Կահարի Հայ. Գիտ. Խնախտուաթի, Ա-Բ, 104): Պագերեւի գրքի վրայ հիմուելով՝ կարելի է մատնանշել հետեւալ տեղանունները թէ լրաստում ու թէ սահմանակից հայրանի գաւառներում: — Մագարա-բառ լեռ (Թիֆլիսի նահ. Փորու գաւառ), Մագարա լեռ (Ախալցխայի գաւառ), Մագարա-ձարան՝ գետակ (Վ. Խալքալաքի գաւառ), Մագարա-ձար լեռ (Արդուինի շրջան), Մագար ձիթ հովոց (Արդու ինի լրջան) Մագարա-տապան լեռ (Օլթու լրջան) եւ այլն (Պատրև, 163): Ափսօն, որ ուստի ստուադարձութիւնը հնարաւորութիւնը չէ տալիս ճիշտ որոշելու, թէ այս անունների միջի ը տառն ի՞նչ հնչին ունի — նաեւ զ, թէ միշտ հ կամ դ: Եթածս անունների կողքին կարելի է գտնել բազմաթիւ նման անուններ, որոնց վրայ արժէր որ ուշը գարձնեին արեւելագետներն ընդհանրապէս ու կովկասագէտները՝ մասնաւորապէս: Տեսէր նաեւ Eber-Nahara աեղանունը («Transpotamien, westlich des Euphrat») համեմատելով Eber-Mihr (= Waraz-Mihr) անհնանուան հետ (Justi, 201 ու 503):

Այս երեք տարբերակներն էլ պատկանում են մ նախահնչիւնով կարգին: Մենք տեսանք, որ Ներ-Շապուհ անուան ստուգաբանութեան հետեւանքով հայերէնում ստացվում է նաեւ նախահնչիւնով մի նոր կարգ, որին հաստատապէս պատկանում է Ներ փոփոխակն ու թերեւս նաեւ ժողովրդականն նահար տարբերակը: Արդ, այն բավէից, երբ ստորդ պարզվում է, որ հայերէնում ներ = Միհր, հարց է ծագում, թէ արդեօք պարախ մէջ չի կարելի մատնանշել սրան համապատասխան փոփոխակ կամ փոփոխակներ նախահնչիւնով:

Մեզ թւում է, թէ կարելի է: Հայերէնում յայտնագործուած թեղիսը, թէ ներ = Միհր, օգնում է ստուգաբաններու կամ նորապէս մեկնաբաններու պարսկական մի քանի անուններ:

Այսպէս, Յուստին Nehormizd (Ներ-Հորմիզդի պէտք) անունն ստուգաբանում է իրբեւ New-Hormizd (Ներ-Հորմիզդ), այսինքն Հերոս Հորմիզդ: Սակայն նոյն պարսկագէտը Նեհորմիզդ թ. 2-ի մասին ասում է, թէ ու ամամային արդ դէպքում գործ ունենք երկանութեան հետ. միեւնոյն անձը կոչուել է թէ Ներ-Հորմիզդ (= Ներ-Հորմիզդ) ու թէ Միհր-Հորմիզդ: Մեզ թւում է, թէ այստեղ անհրաժեշտ չէ անդամական արդ դէպքում գործ ունենք երկանութեան հետ. միեւնոյն անձը կոչուել է թէ Ներ-Հորմիզդ (= Ներ-Հորմիզդ) ու թէ Միհր-Հորմիզդ: Մեզ թւում է, թէ այստեղ անհրաժեշտ չէ անդամական արդ դէպքում գործ ունենք երկանութեան հետ. միեւնոյն անձը կոչուել է թէ Ներ-Շապուհ Միհր-Շապուհ լինում է այն սիստին, ինչ որ անուան էր Հիւրշմանը Միհր-Շապուհ ու Ներ-Շապուհ անուններն ստուգաբաններիս, երբ խորամուխ չէր լինում պատմական տուեալիների համապատասխանութեան խընդրի մէջ: Բացի սրանից, Յուստին լրիւ հետեւութիւն չէ հանում իւր այն իմացածից, թէ Ներ-Շապուհ = Միհր-Շապուհ, այսինքն՝ որոշակի չի հանում այն կարեւով զուգագրութեանը, թէ ներ = Միհր: Այսպէս պատճառով էլ նա անտեսում է այն կարեւով տեղեկութիւնը, թէ նոյն անձը կոչուել է նաեւ Միհր-Հորմիզդ, ուստի եւ Ներ-Հորմիզդ ստուգաբանում իրբեւ ներ-Հորմիզդ: մէջ տեղում երկանութեան ենթագրելով: Այն ինչ լուծումը չատ մօտ էր. ինչպէս որ հայերէնում Ներ-Շապուհ = Միհր-Շապուհ

պուէ, այնպէս էլ պարսկերէնում Ne-Hormizd = "չ թէ Ne[w]-Hormizd, այլ = Ne[r]-Hormizd = Mihr-Hormizd, — "wie er in den sonstigen Brichten heißt", — կատէնք մէնք նրա խօսքնով, նրա ասածը քիչ բառափախնով:

Երկրորդ օրինակ: Արարացի պատման թիհրիսոք պատմելով Արուել՝ Հասան ալ-Խաջանու († 834) մասին՝ տալիս է սրան վերադրուած զբքերի սարքում մէկ երկի անուն էլ, որ կոչվում է "Nahr-Adar-յսնաս" = Նահր-Ադար-Յուշնաս: Յուշնան է պատկանում այս գրքի անունն ուղղելու վատքքը: Նահրաւոր պարսկագէտն այս անունն ուղղել է Nahr-Adar-յսնաս = Mihr-Adar-յսնաս = (Նիհր-Ադար-Յուշնաս = Միհր-Ադար-Յուշնաս): Ռուս պարսկագէտներից կ. Ա. Ինոստրանցեն էլ ճիշտ է համարում Յուշնան ուղղումը եւ Nahr-ը կարգում է Mihr¹: Դիտելի է, որ ըստ Ինոստրանցենի՝ միւսնայն բառը Թիհրիսոք մատեանում պանկում է մէկ Երկրորդ տեղ էլ եւ գարձեալ պատաղուած: Միւսնայն բառի երկու տեղումն էլ «աղաւաղուած» Հանդէս գալլ մատծել է տալիս, որ այս զէպքում գործ անենք ոչ թէ «աղաւաղման» հետ, այլ յանձին այս «աղաւաղուած ձեւի» մէր Հանդէս է ենում Միհր անունն մի ամ գործածուական ձեւ պարսկերէնում, որից անցել է արար պատմալրին: Հայերէնում Միհր անունն ներ ձեւի գոյութիւնը մեզ հակամ է միզունելու, որ պարսկերէնում էլ Միհր-Մահրը կարող էր դառնալ նիհր կամ Նահր, ինչպէս որ Mihr-Normizd-ը փոխուել էր Ne-Normizd-ի (= Ner-Normizd-ի): Այս պատղայում տեղորդ է գառնում Յուշնան վերջնական ուղղումը:

Բառասկզբում մ-ի և դառնալի այսպէս անունելու հետեւանքով Յուշնան ուրիշ շէպքերում էլ է տարակոյսի մէջ ձգում: Այսպէս Թիրզուսին պարսկիներից մէկին՝ Պապակին՝ անուանում է Նահրաւանի որդի: Յուստին ինչպէս որ Երկրայիշ էր Նահրաւանի որդի: Յուստին ինչպէս որ Իրկրայիշ էր ալ-Խաջանու զբքի անունը «Նահր-Ադար-Յուշնաս» տեսնելիս, ատարպաւում է նահեւ այս Նահրաւան անունը Հանդիպելիս, որա զիմաց Հարցական է գնում, թէ

կասկածելի հոչակելով բառի ընթերցուածն ու թէ անորոշ համարելով նշանակութիւնը (219, 242, 67): Մինչ արկդը բացվում է շատ հասակ կերպով. Նահրաւան = Մահրաւան, Մահրաւան կամ Մահրեւան: Այս զուզագրութիւնը հաստատվում է Նահրաւանի մի այլ ընթերցուածով, որ տալիս է Tabarii եւ որը մէջ է բերում Յուստին՝ դարձեալ Հարցական նշան գնելով նրա առաջ Տաբարին այս Նահրաւանին ասում է Բերաւան. այս Բերաւան ձեւը հեշտութեամբ կարող է ստացուել Մերաւանից, ինչպէս ցոյց են տալիս բարձրութիւն ուրիշ օրինակներ¹: Սակայն բարձրութիւնը այս օրինակներից մէջ ամենազիակութիւնը այս Նարիմանա անուան փոփոխակներն են. Այս անունը, բացի վերագրեալից, կայ Naraman թէ Baraman ու թէ Maraman ձեւով (Justi, 225): Բայց այս Nahrawanը կարող էր ծագել Mahrawanից, իսկ սրա Mehrawan կամ Merawan փոփոխակն էլ իւր հերթին զանար Berawan:

Վերջապէս ասենք, որ Յուստին չբացարուած անուն է զնում Nihadan անունը՝ որա զիմաց նշանակելով Nahawan ու Naharan փոփոխակները, որոնք նոյնպէս Համարում է չսատուգարանուած²: Այնինչ կարելի է ընդունել, որ Nihadanը Nihadan-Mihradanի ամբողբակն է (Հմմտ. Հայերէնի Միթրոդանի հետ) Nahawanը վերեւի Nahrawan-Mahrawan ու է, իսկ Naharanը Maheran է, այսինքն Mairan (Հմմտ. յուն. Μαίρανος): Maheran-Mihradanի մի նոր փոփոխակը:

Այժմակերպ ասածներու Միհր անուան նոր փոփոխակները ստանում ենք

Հայերէնում՝ ներ — Ներ-Շապուհ,
Նահր — Նահր-Խանաս,
Պարսկերէնում՝ Մախար — Մախարէն,
Միլ — Միլլատ,
Մաս — Մազմա,

¹ Mazouz — Barouzas, Mardane — Bardane, Mardos — Bardiya, Manian — Baniyan, Mahadar-յսնաս — Behadur-յսնաս եւ այլն (Justi, 65, 190, 194, 191, 184 եւ այլն): Հմմտ. նոյն առանց մ սկզբնաշնորհութիւնը գրեարդ փոփոխակի Nabuh — Babuh, Nabil — Behil, Naidun — Baidun, Nasin — Pisina (— Bisina), Nertur, — Bertur, Natra — Batra, Nezar — Bezar, Nirwan — Birwan եւն (Justi, 218, 219, 219, 226, 65, 226, 226, 229, 62 եւն):


² Այս ականակեաց ու առքաւ են նաեւ Nirawsasp, Nirmaran ու Nirwan (Հմմտ. Birwan) անունները, որոնց մէջ կարելի է ուսուրել: Անք (— Wēr = Wēs) փոփոխակը (Justi, 280):

սղարսկելեհնում՝	Եհ	— Նե-Հորմիզդ =
	Եեր	Ներ-Հորմիզդ,
	Եահը	Եահը - Աղար - Զուշնաս, Եա-
		Հրաւան,
	Բեր	Բերաւան,
	Բիր	Բիրուան,
	Եահ	Եահաւան,
	Եահար	Եահարան,
	Նիր	Նիրապշնալ, Նիրուան,
	Եիհ	Եիհասուն.

Եիհ — Եիհաղան:

Սրանցից մ հնչիւնով սկսողները պատկանում են Միջը անուան փոփոխակների Ա. կարգին, Բ. կարգը կազմում են և ով սկսողներն, իսկ Գ. կարգին պատկանում է Բ.ով սկսող Բեր ու Բիլ տարբերակներ:

Այս փոփոխակների ճիւղաղբութիւնն էլ
կը լինի հետեւալը, ուր ընդգծած տալիս
ենք նոր տարբերակները :



Ասածներովս անշուշտ չեն վերջանում
Միհր անուան փոխիրակները։ Մեր նոպա-
տակը չե էլ եղել այս խնդիրն սպառելլ։
Մենք ցանկացել ենք լոկ մասնանշել, որ
Միհր անուան ծաւալման սահմանները չա-
ռելի ընդարձակ են, քան ընդունուած է
կարծել։ Իսկ այս անհրաժեշտ է չեշտել
միհրապաշտութեան ներգործութեան թափն
ու նրա աղդեցութեան ուրբաների լայնացա-
լածութիւնն ընդգծելու համար։

(Ծարունակելի) ԹԱԴՐՈՍ ՍԻՉԱԼՔԵԳԵԱՆ
ԵՐԵՎԱՆ :



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՅՐՎՈԼՈՅ ՊԱՏՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՄԻԱ ՀԵԼԵՊՈՅԻ ՔԻՈՂԻԵՐՑԵՎՈՒ

9 L 0 h lv - 9.

(*Tunisian*)

Հասքէօյ այսպէս, ազգային կեանքի եւ
դաստիարակութեան ընտիր վառարան հանդի-
սացած է, եւ ոչ միայն իւր վարժարաններովը
եւ ուսումնականներովը փայլած է անցեալին մեջ՝
այլեւ՝ հայկական թատրոնով, այս, եւ այս մա-
սին ուզած է մրցակից ըլլալ Օրթագիւղի, ուր
հայերէն ներկայացումներ տեղի կ'ունենային
1855 թուականէն սկսած¹.

1858 ին Առաքել Աթոռուն Տիւրիի նախարարութեամբ Խասդիւղի մէջ կը բացուի Հայ թատրոն մը², ուր քանի մը հայերէն շատ յաջող ներկայացումներ կը սարգուին, բայց շուտով կը խափանուի Կառավարութեան արտօնութիւնը ստացած չըլալուն. Խասդիւղի երիտասարդութիւնը առանց վհատելու անմիջապէս կը միանայ Օրթագիւղի Հայ թատերական ընկերութեան եւ իւր ներկայացումները ալ աւելի շքեզօնութեամբ կը վերսկի Բերաբի Կառավարութեանը 1860 ին³,

¹ Учені, 1857, Генерал-Губернаторство:

² Արեգ-Ելք, Ա. Պալուսյա, թիվ 3791, 25 Օգոստ, 1898
և Յէլչումբառն, Ա. Զարդարեանի, 1910-1911, էջ 196.
³ Մկնարկ, Ա. Պալուսյա, թիվ 1020, Հայոց հետեւ

³ Միշտակ, Եւ Մասկոն, Կ. Պոլսոց 1860, Թիւ Նյուեմբերի
եւ Գեղամավառք:

digitised by